

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՀ Սյունիքի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան) հայտարարում է Աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետևյալ կրտսեր թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին**

**1. Կապանի սոցիալական ծառայության տարածքային գործակալության երկրորդ կարգի մասնագետ (ծածկագիր՝ 68-4.3-6),**

**2. Կապանի սոցիալական ծառայության տարածքային գործակալության մասնագետ (ծածկագիր՝ 68-4.3-8),**

Գործակալության պետի հանձնարարությամբ կատարում է տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրում սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների սոցիալական և նյութական պայմանները, մասնակցում է գործակալության հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը, գործակալության աշխատանքային ծրագրերի մշակմանը, գործակալության կողմից սպասարկող տարածաշրջանում անապահով ընտանիքների հայտնաբերման աշխատանքներին և ներկայացնում առաջարկություններ:

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

- առնվազն միջնակարգ կրթություն,

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարան (ք. Կապան, Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում (ծևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի ) պատճենները,

- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը՝ բնօրինակի հետ,

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

- մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

- անձնագիր և անձնագրի պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9<sup>30</sup>-ից մինչև 12<sup>30</sup>-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 09.12.2015թ.:**

**ՀՀ քաղաքացիները ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել Մարզպետարանի աշխատակազմ (ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. 25342):**